Արագ փաստեր 3

Վարորդական իրավունքի վկայականի լրացուցիչ վերանայում նշանակելու գործընթաց

Դուք ստացե՞լ եք Ծանուցագիր լրացուցիչ վերանայում նշանակելու մասին (Secondary Review Referral Notice) (DL 209A):

Դուք ստացել եք DL 209A, որովհետև Ավտոտրանսպորտի դեպարտամենտի (Department of Motor Vehicles, DMV) տեղական բաժանմունք կատարած այցի ընթացքում Ձեր ներկայացրած՝ ինքնությունը կամ մշտաբնակությունը հաստատող փաստաթուղթը (փաստաթղթերը) լրացուցիչ վերանայման կարիք ունի (ունեն): Վարորդական իրավունքի վկայականի (DL) լրացուցիչ վերանայում նշանակելու գործընթաց սկսելու համար **պետք է** զանգահարեք DL 209A ձևում նշված հեռախոսահամարով: Հնարավոր չէ շարունակել DL-ի համար դիմումի գործընթացը, քանի դեռ չեք զանգահարել DMV:

Օգտակար խորհուրդներ. Ինչ է պետք իմանալ DMV զանգահարելիս

- DL 209A ստանալուց հետո, նախքան զանգահարելը և լրացուցիչ վերանայում խնդրելը, սպասեք 5 աշխատանքային օր:
- Հղում կատարելու համար Ձեզ մոտ ունեցեք Ձեր DL-ի համար դիմումի անդորրագիրը:
- Տրամադրվում է լեզվական օգնության ծառայություն: Զանգելիս՝ նշեք. «Ես լեզվական օգնության կարիք ունեմ _____ լեզվով»:

DMV զանգահարելուց հետո փոստով նամակ կստանաք 30 օրվա ընթացքում, որում նշված կլինեն օրը՝, ժամը և այն գրասենյակի գտնվելու վայրը, որտեղ անցկացվելու է Ձեր հարցազրույցը:

Ծանոթություն. Եթե կորցրել եք DL 209A ձևը, խնդրում ենք հետագա աջակցության համար դիմել DMV-ին 1-800-777-0133 համարով:

Ի՞նչ կարելի է ակնկալել հարցազրույցի ժամանակ:

Հարցազրույցի ընթացքում կվերանայվեն Ձեր ինքնությունը և մշտաբնակությունը հաստատող փաստաթղթերը, Ձեզ կտրվեն մի շարք հարցեր, և կստուգվի տեղական գրասենյակում կատարված լուսանկարը: Հարցազրույցի գործընթացը կարող է տևել մինչև 1 ժամ:

Եթե հնարավոր լինի ստուգել և հաստատել Ձեր ինքնությունը և մշտաբնակությունը հաստատող փաստաթղթերը, Դուք փոստով կստանաք նամակ-հիշեցում, որում տրված կլինեն լրացուցիչ հրահանգներ այն մասին, թե ինչպես շարունակել DL-ի գործընթացը:

Ի՞նչ փաստաթղթեր են պահանջվելու:

Ձեր փաստաթղթերն օգտագործվելու են Ձեր ինքնությունը և բնակության վայրը որոշելու համար: Անհրաժեշտ կլինի բերել փաստաթղթեր, որոնք կապացուցեն Ձեր ինքնությունը և մշտաբնակությունը: Այդ փաստաթղթերը պահանջելն օգնում է ապահովել DMV-ի կողմից տրվող վարորդական իրավունքի վկայականի ճշտությունը և կարող է կանխել այլ անձի կողմից Ձեր տվյալների և (կամ) ինքնության օգտագործումը: Նշանակված հարցազրույցի համար բերեք սույն գրքույկում թվարկված հնարավոր բոլոր փաստաթղթերը: Հարցազրույցից հետո բոլոր ներկայացված փաստաթղթերը կվերադարձվեն Ձեզ:

- Դպրոցի փաստաթուղթ (փաստաթղթեր), ներառյալ՝
  - պետական կամ մասնավոր
  - տարրական, միջնակարգ կամ բարձրագույն ուսումնական հաստատության
  - քոլեջի կամ համալսարանի

Դպրոցի փաստաթղթերը պետք է ներառեն Ձեր ծննդյան թվականը կամ, արտասահմանյան դպրոցի փաստաթուղթ լինելու դեպքում, կնքված լինեն և ներառեն դիմորդի լուսանկարն այն տարիքում, երբ կատարվել է արձանագրությունը:

- Միացյալ Նահանգների կառավարության կամ Միացյալ Նահանգների տարածքում որևէ կառավարության կողմից տրված կամ գրանցված փաստաթղթեր, ներառյալ՝
  - Դիմում ապաստան ստանալու և վտարումը կասեցնելու համար (Application for Asylum and for Withholding of Removal form) (I-589)
  - Իրավազորության վկայական «ոչ ներգաղթյալ ուսանող» կարգավիճակի համար (Certificate of Eligibility for Non-immigrant Student Status) (F-1 կամ M-1)
  - Իրավազորության վկայական փոխանակման ծրագրով այցելող անձի համար (Certificate of Eligibility for Exchange Visitor) (J-1)
  - դատարանի փաստաթղթեր, որտեղ Դուք նշված եք որպես դատավարության կողմ
  - եկամտահարկի հայտարարագրեր
  - DL (գործող կամ ժամկետանց)

- Ընտանեկան դրությունը, ներառյալ՝
  - ամուսնության վկայական
  - քաղաքացիական զուգընկերոջ գրանցումներ

Ամուսնության վկայականի լեզուն (անգլերենից տարբեր) պետք է ունենա վավերացված անգլերեն թարգմանություն կամ թարգմանությունը հաստատող գրավոր ցուցմունք՝ երդմամբ:

- Ամուսնալուծության որոշումներ

Ամուսնալուծության որոշման լեզուն (անգլերենից տարբեր) պետք է ունենա վավերացված անգլերեն թարգմանություն կամ թարգմանությունը հաստատող գրավոր ցուցմունք՝ երդմամբ:

- Արտասահմանյան փաստաթուղթ (փաստաթղթեր), ներառյալ՝
  - արտասահմանյան անձնագիր
  - օտարերկրյա քաղաքացու նույնականացման (ID) քարտ
  - հյուպատոսական ID քարտ
  - արտասահմանյան վարորդական իրավունքի վկայական (DL)

Արտասահմանյան վարորդական իրավունքի վկայականի լեզուն (անգլերենից տարբեր) պետք է ունենա վավերացված անգլերեն թարգմանություն կամ թարգմանությունը հաստատող գրավոր ցուցմունք՝ երդմամբ:

- ID քարտ

ID քարտը (քարտերը) պետք է ներառի դիմորդի լուսանկարը, որը տրված է Միացյալ Նահանգների կառավարության կամ Միացյալ Նահանգների տարածքում որևէ կառավարության կողմից:

- Ծննդյան մասին փաստաթուղթ, ներառյալ՝
  - ծննդյան վկայական
  - որդեգրման արձանագրություն(ներ)

Վերոհիշյալ ցանկում ներկայացված ցանկացած փաստաթուղթ (փաստաթղթեր), որտեղ նշված են Ձեր ամուսինը, գրանցված քաղաքացիական զուգընկերը, երեխան, ծնողը կամ օրինական խնամակալը՝ պայմանով, որ դիմորդը տրամադրի նաև ծննդյան վկայական, որդեգրման արձանագրություն, ամուսնության վկայական կամ քաղաքացիական զուգընկերոջ գրանցման վկայական՝ կապը հաստատելու համար:

Ինչպե՞ս ձեռք բերեմ արտասահմանյան փաստաթղթեր:

Եթե հարկավոր է փոխարինել կամ ձեռք բերել Ձեր արտասահմանյան փաստաթղթերը, կարող եք դիմել ձեր երկրի հյուպատոսություն: Հյուպատոսության գրասենյակը գործում է օտարերկրյա պետության անունից՝ արտասահմանում բնակվող քաղաքացիներին օգնելու և օժանդակելու համար:

Հյուպատոսությունների գտնվելու վայրերը և կոնտակտային տվյալները կարող են ամեն օր փոխվել: Վստահ լինելու համար, որ ստանում եք հյուպատոսությունների վերաբերյալ ամենաթարմ տեղեկությունները, այցելեք **state.gov/s/cpr/rls/c23721.htm**, որպեսզի ծանոթանաք Միացյալ Նահանգների տարածքում գործող հյուպատոսությունների ամբողջական ցանկին:

Ի՞նչ կլինի, եթե հնարավոր չլինի ստուգել և հաստատել իմ ինքնությունը կամ մշտաբնակությունը:

DMV-ն ամեն ջանք կգործադրի Ձեր ինքնությունըs և մշտաբնակությունը ստուգելու համար: Եթե DMV-ն չկարողանա դա անել, ապա նամակ կուղարկվի Ձեզ, որում նշված կլինի Ձեր վարորդական իրավունքի վկայականի (DL) լրացուցիչ վերանայում նշանակելու գործընթացի ավարտի մասին: Դուք ունեք լսում պահանջելու իրավունք, եթե DMV-ն չկարողանա ստուգել և հաստատել Ձեր ինքնությունը կամ մշտաբնակությունը: Եթե կեղծ փաստաթղթեր են ներկայացվել, DMV-ն կարող է դիմել հետագա քայլերի:

DMV-ի INV ստորաբաժանման մասին

DMV-ի INV անձնակազմը վարում է լրացուցիչ վերանայման գործընթացը: INV-ն իրավունքի կիրառման առաջատարներից է և ունի ոստիկանության մոտավորապես 220 աշխատակիցներից և ավելի քան 130 օժանդակ աշխատողներից բաղկացած հմուտ անձնակազմ: INV-ն վարում է հետաքննություններ, որոնք վերաբերում են անձնական տվյալների հափշտակմանը, ֆինանսական հանցագործություններին, աշխատողների հակաիրավական վարքագծին, շինծու կամ փոփոխված փաստաթղթերին և սպառողների՝ DMV-ի և մասնագիտական գործունեություն իրականացնելու արտոնագիր ունեցող անձանց դեմ ներկայացված դժգոհություններին: INV անձնակազմը ցուցադրում է հաճախորդների արտակարգ սպասարկում՝ տրամադրելով որակյալ ծառայություններ և դրսևորելով ազնվություն, արհեստավարժություն և հարգանք բոլոր աշխատողների ու սպառողների հանդեպ: